



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

24.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/65

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18631-17 գրությամբ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.10.2017թ. թիվ ԴՎԱ/3513 գրության հիման վրա, 16.10.2017թ. թիվ 03/26-3/18631-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 19.10.2017թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին, (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև որ՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 17.08.2017թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2017թ. թիվ 4-րդ արձանագրության 2.3 կետի համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Սակայն, Ընկերությունը հայտի թիվ 10-րդ հավելվածին կից ներկայացված վճարման պահանջագիրը չի ստորագրել՝ հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ ընդամենը կնքել և ձեռագիր ստորագրել է: Այս պարագայում Պատվիրատուն պետք է առաջնորդվեր Կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի

«բ» և 41-րդ կետով, և մերժել Ընկերության հայտը, զրկելով վերջինիս Ընթացակարգի հետագա մասնակցության իրավունքից, որի արդյունքում չէր կիրառվի կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, կոպտորեն խախտելով Կարգի վերոհիշյալ նորմերը, ինչի պայմաններում Ընկերությունը գտնում է, որ վերջինիս ցուցակում ներառելու հիմքերը առկա չեն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում

մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհիդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2017թ. թիվ 4-րդ արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.3 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պատվիրատուն 14.09.2017թ. հարցումն ուղարկել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 19.09.2017թ. եզրակացություն համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 426,841 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2017թ. թիվ 5-րդ արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 426,841 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն այս անգամ ևս կոպտորեն խախտել է Կարգի 44-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ինչ վերաբերում է Ընկերությանը ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հանգամանքով պայմանավորված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, ապա Ընկերությունը հայտնել է, որ տվյալ պարագայում Ընկերությանը ցուցակում ներառելու հիմքերը բացակայում են, քանի որ Ընկերությունը չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց և հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, այսինքն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը բացակայում են, իսկ տվյալ հիմքերի բացակայության պայմաններում Ընկերությանը ցուցակում ներառելու հիմքերը ևս բացակայում են:

3. Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով

ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2017թ. թիվ 4-րդ արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 4.3 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պատվիրատուն վերը նշված որոշումը կայացնելուց հետո 14.09.2017թ. հարցումն ուղարկել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Պատվիրատուն վերը նշված որոշումը կայացնելուց հետո 14.09.2017թ. ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել՝ հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Պատվիրատուն 19.09.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացել է եզրակացություն, որի համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 426, 841 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 20.09.2017թ. Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, 17.08.2017թ. թիվ 4-րդ արձանագրության 4.1 կետով և 14.09.2017թ. ծանուցմամբ սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է թիվ 6 և 6.1 հավելվածներով նախատեսված փաստաթղթերը, որոնք հաստատվել են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չնայած վերը նշված տեղեկատվությանը (Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը) 27.09.2017թ. ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ ներկայացված «Տեխնիկական բնութագրեր» դաշտը ներկայացված է թերի, և հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2017թ. թիվ 5-րդ արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն որոշ չափաբաժիններում չի նշել տվյալ չափաբաժնի համար պարտադիր համարվող պահանջը՝ հեղյուսների երկարությունը (ըստ արձանագրության հենց 27.09.2017թ. է արձանագրվում Ընկերության կողմից ներկայացված որոշ անհամապատասխանություններ):

Այս փաստը ապացուցում է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից պահպանվել են Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջները, այն է՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սակայն նույն արձանագրության համաձայն, ի զարմանս, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից

սահմանված ժամկետում անհամապատասխանությունների շտկված տարբերակը չի ներկայացվել, և հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը: Այստեղ հարց է առաջանում, երբ կարող էր Ընկերությունը ներկայացնել անհամապատասխանությունների շտկված տարբերակը, եթե հենց 27.09.2017թ. է Պատվիրատուն ծանուցել Ընկերությանը և առաջարկել շտկել անհամապատասխանությունները:

Այսպիսով, այս դեպքում ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հնարավոր պահանջները, մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, Կարգի 44-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.09.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացություն ստանալուց անմիջապես հետո պարտավոր էր մերժել Ընկերության հայտը, այնինչ նույն հանձնաժողովը հայտը մերժելու փոխարեն 8 օր անց միայն՝ 27.09.2017թ. ծանուցում է ուղարկել Ընկերությանը, տալով 1 աշխատանքային օր ժամանակ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն հենց նույն օրը չսպասելով Ընկերության կողմից որևէ գործողության, արձանագրել է, որ վերջինս չի շտկել անհամապատասխանությունները և որից հետո նոր է որոշում կայացրել մերժել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտն երկու հիմքով՝ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու և արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից, «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների մի շարք խախտումներ, ինչով պայմանավորված Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրում է ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18631-17 գրությամբ ներկայացված «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել, Ընկերությանը չներառել նշված ցուցակում:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ի լրումն 19.10.2017թ. ներկայացված վերոհիշյալ դիրքորոշման 23.10.2017թ. գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 4, 852,680 ՀՀ դրամ ($4, 852,680 \cdot 5 = 242, 564$):

Ընկերությունը հայտի թիվ 10 հավելվածին կից ներկայացրած վճարման պահանջագրի 12-րդ տողում որպես հայտի ապահովման գումար նշել է 485, 268 ՀՀ դրամ ($4, 852,680 \cdot 10 = 485, 268$), այսինքն ներկայացված հայտի ապահովման գումարը կազմել է ներկայացված գնի առաջարկի ոչ թե հինգ, այլ տասն տոկոսի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2017թ. թիվ 4-րդ արձանագրության 2.3 կետի համաձայն՝ մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակից «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 4, 852,680 ՀՀ դրամ ($4, 852,680 \cdot 5 = 242, 564$): Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի թիվ 10 հավելված տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որի մեջ հայտի ապահովման գումարի չափը նշել է 485, 268 ՀՀ դրամ ($4, 852,680 \cdot 10 = 485, 268$), այսինքն ներկայացված հայտի ապահովման գումարը կազմել է ներկայացված գնի առաջարկի ոչ թե հինգ, այլ տաս տոկոսի չափով:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ Ընկերության կողմից նշված հայտի ապահովման չափը, որը նշվել է 485, 268 ՀՀ դրամ, գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկի հինգ տոկոսը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնի առաջարկի հինգ տոկոսը կազմում է 242, 564, այլ ոչ թե 485, 268 ՀՀ դրամ ($4, 852,680 \cdot 5 = 242, 564$): Մինչդեռ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին, իսկ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերից, Ընկերությունը գտնում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը բավարար գնահատելով, գործել է ոչ իրավաչափ՝ չպահպանվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները, և վերոհիշյալ խախտմամբ իրականացված ընթացակարգի արդյունքում «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

համար բավարար հիմքեր առկա չեն, քանի որ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Ընկերության հայտը մերժելու արդյունքում, չէին կարող ի հայտ գալ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արձանագրված ենթադրյալ խախտումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.10.2017թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 19.10.2017թ. վերոգիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը՝ բացառությամբ առաջին կետով ներկայացված դիրքորոշման:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.10.2017թ. թիվ ԴՎԱ/3519 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում 3-րդ, 7-15-րդ, 23-26-րդ, 30-31-րդ և 40-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն և վերջինիս ծանուցվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշել է Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից վերը նշված փաստաթղթերը ներկայացվել են, սակայն ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են եղել անհամապատասխանություններ:

Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 426 841 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից վերը նշված անհամապատասխանությունները չեն շտկվել և չեն ուղարկվել սահմանված կարգով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.10.2017թ. ժամը 10:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/65 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/65 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութերի և պահեստամասերի (ծախսային նյութեր) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն 17.08.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 1-15-րդ, 19-40-րդ չափաբաժինների մասով, որի ընդհանուր գինը կազմել է **4 852 680 ՀՀ դրամ**:

3. Ընկերությունը հայտի թիվ 10 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում, որի չափը կազմել է **485 268 ՀՀ դրամ**:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետով «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ 14.09.2017թ. որոշմամբ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 7-15-րդ, 23-26-րդ, 30-31-րդ և 40-րդ չափաբաժինների մասով, որին Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 14.09.2017թ. հարցում է ներկայացրել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 426 841 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում՝ մասնավորապես տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ, ինչպես նաև այն, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 426 841 ՀՀ դրամի չափով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 27.09.2017թ. սահմանված կարգով ծանուցել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.10.2017թ. մերժել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 426 841 ՀՀ դրամի

չափով և սահմանված ժամկետում չի ներկայացրել տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունների շտկումները:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18631-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.10.2017թ. թիվ ԴՎԱ/3513 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, **որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն

ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է **հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:**

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, որի ընդհանուր գինը կազմել է **4 852 680 ՀՀ դրամ:** Մինչև սույն ժամանակ Ընկերությունը հայտի թիվ 10 հավելված տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր, որի մեջ հայտի ապահովման՝ տուժանքի չափը նշել է **485 268 ՀՀ դրամ:**

Այսպես, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ կետի «ա» պարբերությունը սահմանում է, որ եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ հայտի **ապահովման չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին**, իսկ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ **հայտի ապահովման չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:** Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման

չափը, որ կազմում է 485 268 ՀՀ դրամ, գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի (4 852 680 ՀՀ դրամ) հինգ տոկոսը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է 242 634 ՀՀ դրամ, այլ ոչ թե 485 268 ՀՀ դրամ ($4\,852\,680 \cdot 5\% = 242\,634$): Հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: ***Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ միայն «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը 17.08.2017թ. թիվ 4 արձանագրությամբ գնահատել է հրավերի պայմաններին համապատասխան, այլև նաև 14.09.2017թ. կայացրած որոշմամբ Ընկերությանը ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, և վերջինիս ծանուցել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 14.09.2017թ. հարցում է ներկայացրել «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.10.2017թ. մերժել է «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 426 841 ՀՀ դրամի

չափով և սահմանված ժամկետում չի ներկայացրել տեխնիկական բնութագրերում հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը գնահատելով բավարար և վերջինիս ճանաչելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, գործել է որ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն, ընթացակարգի հայտերի բացման նիստում հանձնաժողովը պետք է մերժի այն հայտերը, որոնցում հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ուստի Խորհուրդը գտնում է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի հայտը ենթակա էր մերժման դեռևս հայտերի բացման նիստում, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ իրավաչափ է կիրառել Կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան գործընթացները:

Միևնույն ժամանակ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հստակ սահմանում է, այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, մասնավորապես եթե մասնակիցը՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից հրավերի պահանջներին անհամապատասխան հայտի ապահովում ներկայացնելը չի հանդիսանում վերը թվարկված՝ մասնակցին Ցուցակում ներառելու որևէ հիմքերից մեկը, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.10.2017թ. թիվ 03/26-3/18631-17 գրությամբ «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01225461) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ